

թիւնը, ինչպէս նաեւ Սամուէլ Երզնկացւոյ
Հոռմէն վերադառնալուն պարագաները, զոր կը
յանձնարարենք Հռոմարնակ ընթերցողներէն
մէկուն:

Պառնանք այժմ Սարգիս Արքեպիսկոպոսին:

Սարգիս Յակօր Պատրիարքին թոյլտուութեամբ Վ.Պօլիս հաստատուելէն ետեւ, սկսաւ դարձեալ իւր քարոզութիւնները, եւ Հատերէն համակրութիւն գտաւ: Միւս կողմանէ հակառակութիւն կը տեսնէր անոնցմէ, որոնք Քաղկեդոնի ժողովոյն Ս. Հայրերն ու կանոնները եւ զՍ. Լեւոնը կը նշովէին, եւ որոնց համար այն էր զիտունը, սուրբ վարդապետը եւ արթուն հովիւը, որ հռովմէական եկեղեցին կ'անիծէր: Ասոնք տեսնելով որ Սարգիս Հռոմէն դարձաւ եւ Հայոց յարեցաւ, կ'ուզէին որ անիկայ նշովէ Հռովմայ օրհնեալ գահը եւ հռովմէական Հայերը: Բայց Սարգիս գիտէր խոհեմաբար եւ ըստ խղճի վարուիլ: Հակառակողք տեսնելով որ Սարգիս Հռովմայ գահին դէմ բան մը չ'ըսեր. «Ասիկայ տակաւին ֆռանկ է» ըսին. իսկ այլք կ'ըսէին թէ «այլ եւս ֆռանկ չէ»: Յակօր Պատրիարք միշտ կասկածանքի մէջ՝ կ'ուզէր որ Սարգիս ֆռանկ համարուի, որուն հասնելու համար հետեւեալ հնարքը մտածեց: Ուզեց որ Սարգիս Ծննդեան, Պենտեկոստէին, Մեռելոց օրն եւ Ս. Պետրոսի տօներուն քարոզ տայ, որոնց մէջ անպատճառ Ս. Հոգւոյ բղիման վէճը, երկու կամ մի բնութեան խնդիրը, մեռե-